Տէր Նիկողայոս քահանային, որ է աստ երկրէն Բաբերթու, ի գեղջէն Հըն-տրէու։ Արդ, աղաչեմք զձեզ մանկունք նազելի մօրս մեր Սիոնի, սուրբ քա-հանայքդ պատուելի, որ էք տեսուչ ժողովրդի, որ պատահիք սուրբ գրոցս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զԱրապիոնս և զուսուցիչն իմ զմէրտե-սի Տէր Խաչատուր՝ արի և քաջ քարոզարանն Հիզանեցի, որ բազում աշ-խատութեամբ և գործովագութ սիրով հասոյց բիրտս և հաստատամիտս ի յար-հեստ գրչութեան. զփոխարէնն ի Քրիստոսէ տացէ նմին։ Դարձեալ, յերես անկեալ և գլուխ ի գետին դնելով, ով դասք քահանայից և ուսումնասէր սարկաւագունք, յորժամ ընթեռնուցուք զպատմութիւնն սուրբ հայրապետաց և նահատակութիւնս սուրբ մարտիրոսաց, յիշեսջիք ի յաղօթս ձեր՝ անպի-տան հողս և փոշի զԱրապիոն գծողս Բաբերթացի, և զհայրն իմ Ջանումն և զմայրն իմ Շահփայշայն, զքոյրն իմ Լուսխաթունն, փոքր եղբարն իմ Գրիգորն, որք են հանգուցեալ առ Քրիստոսի, և կենդանի եղբայրն իմ Պր. Յակոբն. զկողակիցս իմ զՄարթայն, և որդիքս՝ Յակոբն և Աւքսէնտն, հան-դերձ ամենայն զարմիւք իմովք. ամէն։... Արդ, ես նուաստս ամենայնի և զառածեալս մեղօք ի լի, գծոյլս ի բարին և զարագս ի չարին սուտանուն Սարգիս դպիրս գծողս, աղերսեմ ի ձեզանէ յիշել ի Տէր՝ զյուսուցիչն իմ զՅոհանն դպիրն, որ բազում ջանիւ և աշխատանաք զվրիպեալն և զանի-մաստ թանձրամիտս և յետնեալս ուսոյց արհեստ գրչութեան։. Դարձեալ, յիշեսջիք ի մաքուր յաղօթս ձեր զհայրն իմ զմահտեսի Տէր Յովանէս քա-հանայն և զմայրն իմ Զարդարն, և զքոյրս՝ Գուլվարդն, և զեղբարքն իմ Գասպարն, Կիրակոսն, Մելքոնն, Թորոսն, և ամենայն արեան մերձաւորքն իմ, զկենդանիս և զհանգուցեալսն առ Քրիստոս. ամէն։

Արդ, աւարտեցաւ սուրբ գիրքս ի դառն և ի դիժար ժամանակիս և ի ձմերացեալ յաւուրս վերջին. եկն ի վերայ մեր բարկութիւն Աստուծոյ, վասն ծովացեալ մեղաց մերոց. յարեան ազգն անհաւատից չար և անօրէն անագորոն և գազանաբարոյ քարապահանջ բռնաւոր, որ կոչին Նեստոր, որ է Թաթարն. եկեալ մտին երկիրն Իլախայ՝ յաւար առնել. որ և բազում քաղաքս և գեղս տապալեցին, և զբազումս գերեցուցին. յետոյ եկեալ ազգն Իլախայ բազում զօրաք ի վերայ նոցա, զգերին թափեցին, և զբազումս սրախողխող արարին. և մնացեալքն եկին փախստական երկիրս Օլախայ և վրդովեցուցին երկիրս զայս, և զբազումս գերի առեալ տարան. և յետ երից և չորից աւուրց անցանելոյ նոցա, եկն եհաս այլ չարագոյն բոթ, թէ ահա Միրոն պարոնն ժո-ղովեալ է բազում Ղազախ, և կուգայ ի վերայ միւս Պարոնին. և ահա կա-տարեցաւ բանն տէրունական՝ որ ասէր, թէ տուն՝ երկու բաժանեալ աւերես-ցի։ Վասն որոյ մեծամեծքն Միրոն պարոնին զալպեցին զնա. որ եկեալ փա-խըստեամբ գնաց նստաւ ի բերդն Խոթինու. և երկիրս անտիրացաւ ի թա-գաւորաց չորս ամիս. յետոյ եկն որդին Ցըռատոլ պարոնին, տղայ գոլով. նստաւ ի Եաշ քաղաքին աթոռ թագաւորութեանն. ըստ այնմ որ ասէ, թէ Աստուած որ բարկանայ ի վերայ երկրի՝ մանուկ թագաւոր առաքէ նոցա և